ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 25.07/299
25.07.2014 թ.

ՀՀ արդարադատության նախարար
Հ. Մանուկյանին

Հարգելի պարոն Մանուկյան,

2014թ. մայիսի 14-ին կազմակերպության թիվ Ե/2014-14.05-179 դիմումով, դիմել եմ Ձեզ, ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննություն հարուցելու՝ 2014թ. հունվարի 10-ից մայիսի 2-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ դատապարտյալներին թվով 39 բջջային հեռախոսներ փոխանցելու կամ փոխանցելուն նպաստելու փաստի առիթով:

Կազմակերպության կողմից ներկայացված դիմումի վերաբերյալ մինչ օրս պատասխան գրություն, առավել ևս եզրակացություն չեմ ստացել:

ՀՀ Արդարադատության նախարարի 2006թ. թիվ ՔՀ-46-Ն հրամանի 2-րդ գլխի 6-րդ կետի համաձայն՝ ծառայողական քննությունն իրականացվում է հնարավոր սեղմ ժամկետներում, բայց ոչ ավելի, քան դրա նշանակումից սկսած 30 օրվա ընթացքում:

Այսինքն, վերը նշված իրավական ակտը հստակ սահմանում է ծառայողական քննության ժամկետը, որը պետք է լինի հնարավորինս սեղմ, բայց ոչ ավելի, քան 30 օր:

Կազմակերպության դիմումի ներկայացման օրվանից անցել է ավելի քան 2 ամիս, սակայն դեռևս որևէ որոշում կազմակերպությունը չի ստացել:

Ուստի ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով ՀՀ արդարադատության նախարարի 2006թ. թիվ ՔՀ-46-Ն հրամանի դրույթներով, խնդրում եմ տրամադրել կազմակերպության 14.05.2014թ. դիմումի հիման վրա իրականացված ծառայողական քննության արդյուքում կայացված եզրակացությունը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am